## *Յ Ի Ն Ո Ւ Ն Ք*

*Յինունք կը կոչուի Զատիկէն մինչեւ Հոգեգալուստ երկարող 50 օրերը, որոնք ամբողջովին Տէրունի տօներ են՝ նուիրուած Քրիստոսի Յարութեան եւ Համբարձումին, իսկ յիսուներորդ օրն ալ՝ Հոգեգալուստին։*

*Յինունքի իւրաքանչիւր Կիրակին ունի յատուկ անուանում․*

1. *Ս․ Զատիկ*
2. *Նոր Կիրակի կամ Կրկնազատիկ*
3. *Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի*
4. *Կարմիր Կիրակի*
5. *Երեւումն Ս․ Խաչի*
6. *Երկրորդ Ծաղկազարդ*
7. *Հոգեգալուստ*

## Eastertide

The 50 days from Easter to Pentecost is called Hinoonk (Eastertide), which are all feasts of the Lord, dedicated to the Resurrection and Ascension of Christ, and the fiftieth day to Pentecost․

Each Sunday of Hinoonk has a special name։

1. Easter
2. New Sunday or Second Easter
3. Ashkharhamatran or Green Sunday
4. Red Sunday
5. The Apparition of the Holy Cross
6. Second Palm Sunday
7. Pentecost

***Այս տարի հոգեհանգիստ կարելի չէ կատարել հետեւալ տաղաւար տօներուն․***

- *Կիրակի, Յուլիս 12…………………….Այլակերպութիւն Քրիստոսի*
- *Կիրակի, Օգոստոս 16……………………Սուրբ Աստուածածին*
- *Կիրակի,․Սեպտեմբեր 13……………………………………Խաչվերաց*

**NO HOKEHANKISD SERVICES ON THESE FEAST SUNDAYS:**

July 12……………………………………Feast of the Transfiguration
August 16……………………Assumption of the Holy Mother of God
September 13…………………………………Exaltation of the Holy Cross

# Ս. ԽԱՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
# SOORP KHATCH ARMENIAN APOSTOLIC CHURCH

## SUNDAY, APRIL 19, 2026



ՁԱՅՆ ԴՁ

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԻՐԱԿԻ/ԿԱՆԱՉ

GREEN SUNDAY

---

ՀԱՄԱՍՏԵՂ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ
ՅԱՏՈՒԿ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ 9:30-ԻՆ
SPECIAL SERVICE FOR
HAMASDEGH ARMENIAN SCHOOL 9:30 a.m.

*Ս. Պատարագ Առ. ժամը 10։30-ին հեռարձակում*

Divine Liturgy **10:30 a.m.** Live Streamed

---

Soorp Khatch Armenian Apostolic Church
4906 Flint Drive, Bethesda, MD 20816
Office Hours: 10:00 a.m-2:00 p.m.
Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393
E-mail: soorpkhatch@verizon.net
Web Page: www.soorpkhatch.org
Archpriest Fr. Sarkis Aktavoukian, Pastor
Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

*For All Sick Parishioners*



## ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ

- - - - - - (2 . 1 - 10) - - - - - -

Հետեւաբար մէկդի՛ ձգեցէք ամէն տեսակի չար մտածում ու նենգութիւն, կեղծաւորութիւն ու նախանձ եւ ամէն տեսակի չարախօսութիւն։ Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ խօսքին անխարդախ կաթին փափաքեցէք, որպէսզի անով աճիք եւ փրկութեան հասնիք։ «Անգամ մը որ Տիրոջ խօսքին համը առնէք, պիտի տեսնէք թէ քաղցր է ան»: Մօտեցէ՛ք անոր, Քրիստոսի, որովհետեւ ինքն է այն կենդանի վէմը, որ թէպէտ մարդոցմէ մերժուած, բայց Աստուծմէ ընտրուած պատուական վէմն է։ Այդպիսով դո՛ւք ալ, որպէս կենդանի քարեր, Քրիստոսի վէմին վրայ կը կառուցուիք՝ իբրեւ հոգեւոր տաճար· իւրաքանչիւրդ կը դառնաք անարատ քահանաներ եւ Յիսուս Քրիստոսի միջոցաւ հոգեւոր ընդունելի պատարագ կը մատուցանէք Աստուծոյ։ Որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է.-

*«Ահա ես Սիոնի մէջ կը դնեմ*
*ընտրուած վէմ մը, պատուական անկիւնաքար մը.*
*անոր հաւատացողը յուսախաբ պիտի չըլլայ»:*

Քանի դուք հաւատացիք Քրիստոսի, անիկա ձեզի համար պատ-ուական վէմը եղաւ· մինչդեռ չհաւատացողներուն համար՝ անիկա

*«Այն քարն է,*
*որ թէպէտ շինողները մերժեցին գործածել,*
*բայց ինք անկիւնաքարը եղաւ:»,* կամ՝

*«Այն քարն է, որ գլորումի եւ գայթակղութեան առիթ»* պիտի ըլլայ անոնց համար՝ որոնք Աստուծոյ խօսքը անհամոզիչ գտնելով կը գայթակղին, ինչպէս որ Աստուած նախատեսած էր։

Գալով ձեզի, դուք ընտրուած ցեղ մըն էք, թագաւորելու կոչուած քահանաներ, սուրբ ազգ մը, Աստուծոյ սեփական ժողովուրդը· եւ ձեր պարտականութիւնն է քարոզել զօրու-թիւնը անոր՝ որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց։ Որովհետեւ հիմա Աստուծոյ ժողովուրդն էք, մինչ նախապէս չէիք· հիմա իր ողորմութիւնը կը վայելէք, մինչ նախապէս զրկուած էիք անկէ։

## ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

- - - - - - (2.23 - 3 .12) - - - - - -

Զատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները։ Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար եւ պէտք չունէր ոեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի ինք գիտէր թէ ի՛նչ կայ մարդոց սիրտին մէջ։

Նիկոդեմոս անունով մարդ մը կար, Հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի քով եկաւ եւ ըսաւ անոր·

- Վարդապե՛տ, գիտենք որ դուն Աստուծոյ կողմէ ղրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ։

Յիսուս պատասխանեց անոր·

- Լաւ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը։

Նիկոդեմոս հարցուց անոր·

- Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ ծնիլ։ Կարելի՞ բան է որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի։

Յիսուս պատասխանեց·

- Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը ջուրէն եւ հոգիէն չծնի՝ չի կրնար Աստուծոյ արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ հոգիէն ծնածը՝ հոգի։ Դուն մի՛ զարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է վերստին ծնիք։ Հովը ո՛ւր որ ուզէ կը փչէ· դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ՛ կու գայ եւ ո՛ւր կ՚երթայ։ Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին։

Նիկոդեմոս հարցուց·

- Ինչպէ՞ս կրնայ պատահիլ ատիկա։

Յիսուս պատասխանեց·

- Դուն որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր։ Լաւ գիտցիր, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր։ Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չէք հաւատար, ինչպէ՞ս պիտի հաւատաք ինծի՝ եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ։

## 🕮 SCRIPTURE READINGS 🕮

### I PETER 2:1-10

Therefore, rid yourselves of all malice and all deceit, hypocrisy, envy, and slander of every kind. Like newborn babies, crave pure spiritual milk, so that by it you may grow up in your salvation, now that you have tasted that the Lord is good.

As you come to him, the living Stone--rejected by men but chosen by God and precious to him-- you also, like living stones, are being built into a spiritual house to be a holy priesthood, offering spiritual sacrifices acceptable to God through Jesus Christ. For in Scripture it says:

*"See, I lay a stone in Zion,*
*a chosen and precious cornerstone,*
*and the one who trusts in him will never be put to shame."*

"Now to you who believe, this stone is precious. But to those who do not believe, "The stone the builders rejected has become the capstone, "and, "A stone that causes men to stumble and a rock that makes them fall." They stumble because they disobey the message--which is also what they were destined for. But you are a chosen people, a royal priesthood, a holy nation, a people belonging to God, that you may declare the praises of him who called you out of darkness into his wonderful light. Once you were not a people, but now you are the people of God; once you had not received mercy, but now you have received mercy.

### JOHN 2:23-3:12

Now while he was in Jerusalem at the Passover Feast, many people saw the miraculous signs he was doing and believed in his name. But Jesus would not entrust himself to them, for he knew all men. He did not need man's testimony about man, for he knew what was in a man.

Now there was a man of the Pharisees named Nicodemus, a member of the Jewish ruling council. He came to Jesus at night and said, "Rabbi, we know you are a teacher who has come from God. For no one could perform the miraculous signs you are doing if God were not with him." In reply Jesus declared, "I tell you the truth, no one can see the kingdom of God unless he is born again." "How can a man be born when he is old?" Nicodemus asked. "Surely he cannot enter a second time into his mother's womb to be born!" Jesus answered, "I tell you the truth, no one can enter the kingdom of God unless he is born of water and the Spirit. Flesh gives birth to flesh, but the Spirit gives birth to spirit. You should not be surprised at my saying, 'You must be born again.' The wind blows wherever it pleases. You hear its sound, but you cannot tell where it comes from or where it is going. So it is with everyone born of the Spirit."

"How can this be?" Nicodemus asked. "You are Israel's teacher," said Jesus, "and do you not understand these things? I tell you the truth, we speak of what we know, and we testify to what we have seen, but still you people do not accept our testimony. I have spoken to you of earthly things and you do not believe; how then will you believe if I speak of heavenly things?

## GREEN SUNDAY

This Sunday is Green Sunday, also known as Sunday of the World Church in the sense of the church belonging to the whole world beginning with Christ and the Apostles who met regularly to pray and partake of the Holy Sacrament of Communion.

The concept of Green Sunday most probably comes from an ancient folk holiday celebrating spring. Our forefathers, seeing mother earth bloom after long winter months, glorified the Creator with an act of thanksgiving and celebrated by decorating the church and themselves with greenery. Green is the color of life, freshness and promise. After a barren winter we are filled with hope, life, and love.

## *ԱՇԽԱՐՀԱՄՏՐԱՆ ԿԱՄ ԿԱՆԱՉ ԿԻՐԱԿԻ*

*Աշխարհամատուռ բառը կը գործածուի բազմութեան յատկացեալ եկեղեցի իմաստով: Այս անունը տրուած է նաեւ Սիոնի Վերնատան՝ ուր Քրիստոս վերջին ընթրիքը կատարեց եւ հաղորդութեան խորհուրդը հաստատեց: Այնուհետեւ, Քրիստոսի Համբարձումէն ետք, Առաքեալները սովորութիւն ըրին այնտեղ հաւաքուիլ եւ նոր հաւատացեալներուն հետ հաղորդութիւն, աղօթք եւ սիրոյ սեղան ունենալ:*

*Աշխարհամատրան Տօնը, այսինքն Վերնատան Քրիստոնէ-ութեան առաջին եկեղեցին ըլլալուն յիշատակը, բոլոր Քրիստոնեայ եկեղեցիներուն նախատիպը եղաւ:*

*Աշխարհամատրան Կիրակին կը կոչուի նաեւ Կանաչ Կիրակի· կը կարծուի որ այս անուանումը առնչուած է բնութեան կանաչապատման հետ :*

## REGISTER FOR DATEV SUMMER PROGRAM IN PERSON: JUNE 28 – JULY 5, 2026

The Armenian Prelacy has planned an in person session of St, Gregory of Datev Institute Program for youth ages 13-18, scheduled to take place from Sunday, June 28 to Sunday, July 5, 2065, at Shiloh Bible Camp & Retreat Center in Hewitt, New Jersey and will include lectures and engaging discussions on faith related topics.
To register please go to the following link:
https://armenianprelacy.org/programs/datev/
If you have any questions, please contact Dn. Shant by email or by calling: shant@armenianprelacy.org 212-689-7810

**2026 FEASTS**

| | |
|---|---|
| April 24 | Feast of the Armenian Holy Martyrs of the Armenian Genocide |
| May 3 | Apparition of the Holy Cross |
| May 14 | Ascension |
| May 24 | Pentecost |
| June 1 | Saints Hripsimiank |
| June 2 | Saints Gayaniank |
| June 6 | Saint Gregory the Illuminator's Delivery from the Pit |
| June 7 | Feast of Holy Etchmiadzin |
| June 20 | Discovery of St. Gregory the Illuminator's Relics |
| June25 | Saint Sahag and Saint Mesrob |
| June 27 | King Tirdat, Queen Ashkhen and Khosrovidoukht |
| July 12 | Feast of the Transfiguration |
| July 18 | Saint Thaddeus and Saint Sandoukht |
| August 16 | Assumption of the Holy Mother of God |
| September 13 | Exaltation of the Holy Cross |
| September 26 | Saint Kevork (George) |
| September 27 | Holy Cross of Varak |
| October 10 | Holy Translators |
| October 25 | Discovery of the Cross |
| October 31 | Feast of All Saints |
| November 7 | Holy Archangels Gabriel & Michael |
| November 28 | Saint Thaddeus and Saint Bartholomew |

*2025 & 2026 Membership Dues* - Parishioners who have not paid their 2025 Annual Membership dues are encouraged to remit payment. 2026 Membership Dues are also accepted now. The membership fees are $150.00 per adult and $50.00 for each full time student ages 18-26. These dues are 100 percent tax deductible.

*We pray and hope that you adhere to these guidelines and be a role model for the generations to come in order to preserve our Armenian Church heritage and traditions.*

# Armenian Church Etiquette

ENTERING THE CHURCH

Your entrance into an Armenian Apostolic Church should be reverent and solemn. Always make the sign of the cross as you enter the Sanctuary. It is not appropriate to walk in the aisles when:

- The Gospel is being read
- The *Havadamk* (Nicene Creed) is in progress
- The Chalice Procession is occurring
- The priest is delivering the sermon
- The choir is singing *Soorp Soorp, Hayr Mer or Der Voghormia*
- Holy Communion is being distributed

Wait until the prayer or hymn is over and then proceed to take your place in a pew.

LIGHTING OF CANDLES

One of the devotional practices of the Armenian Apostolic Church is the beautiful custom of lighting candles in front of the Holy Icons. Make the sign of the cross, say a short prayer and take your place. Candles may be obtained from the table in the narthex/vestibule. It is customary to make a freewill donation when taking candles.

TAKING YOUR PLACE IN A PEW

Bow your head slightly, make the sign of the cross and silently say the Lord's Prayr as you walk towards the pew. You are now ready to participate in the services.

General Guidelines

It is important that we participate in the Divine Liturgy every Sunday, preferably from the beginning of the service, for the entire duration of the service, and receive Holy Communion.

While in church, it is not proper:

- To use cell phones or tablets
- To take pictures by disturbing the Services
- To cross legs while sitting
- To place your arms on the back of the pews
- For men and women to wear hats
- For ladies not to cover their heads
- To dress too revealing or too casual (No shorts, short skirts, tank tops, gym clothes, etc..)